

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ. Կ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հայ գրականության էջերը հարուստ են առանձին և մատենակից բառա-
յանային աշխատանքներով: Բառերի բացատրությունները, ստուգաբանու-
թյուններն ու մեկնությունները հատկապես հաճախակի են դառնում աշխար-
հաբարի կազմավորման շրջանում: Աբովյանը, Պռոշյանը իրենց աշխա-
տություններում գործածած երկուսից-երեք հազար օտար ու բարբառային
բառեր են բացատրում մերթ բուն տեքստում և մերթ էջատակին: Դրանք հա-
վաստի աղբյուրներ են, որոնք մեծապես օգնում են պարզելու այդ բառերի
տվյալ ժամանակին ունեցած իմաստը:

Աբովյանի, Պռոշյանի սկսած այդ գործը հետագայում շարունակում են
ուներ այն գրողները, որոնց համար հարազատ է եղել ժողովրդի բառ ու բանը:

Հ. Թումանյանն իր աշխատություններում հաճախակի փակագծված
տվել է օգտադործած բառի բացատրությունը, հատկապես այն դեպքերում,
երբ գործ է ածել օտար բառ, ինչպես՝ պրոցենտ (տոկոս) IV—214¹, խաչամ
(չոր տերև) III—107, ֆուֆուրթ (ծծումբ) III—107, դամֆաշ (զուռնի ձեն պա-
հող) III—108, դիլչի (թմբկահար) III—108, նամարդ (տմարդի, ոչ մարդ)
IV—53, յադ (օտար) IV—278, Շուրագյալ (Շիրակ) IV—362, ջիրիդ (ձիար-
շավ) III—28, եֆֆա (ահադին) III—29, թոռչի (ձկնորս) III—31, բոլուկ (ոհ-
մակ) III—101, թալա (անտառումը բաց տեղ, բացատ) III—106:

Փակագծված բացատրությունների մեջ զգալի տեղ են գրավում բարբա-
ռային բառերի բացատրությունները, ինչպես՝ ցել (վարած հող) III—105,
կոպար (շավիղ բաց անել) III—105, ջրի պիպենակ (թիթեռ) IV—118, կոռ
(շորագյալցի) III—10: Մի այլ տեղում՝ «Հեռնականները կոռ կոչում են դաշ-
տաբնականներին, լոռեցիք մասնավորապես շիրակացիներին, այս բառով «ա-
նարի, վախկոտ» են հասկանում» II—382:

Փակագծված բացատրություններից բացի Թումանյանը բաղմամբիվ բա-
ռեր բացատրել է էջատակին: «Աղքատի պատիվը» պատմվածքում ինքուր
բուսել է վնիտ ջրերի ափին նախադասությունը աստղանշված է և էջատակին
բացատրված՝ «քուրդը—մի հասարակ անհոտ ծաղիկ է» III—18: Մի այլ
առիթով՝ «ծաղիկ է, որովհետև քրդի քոլոզի նման է պսակը» IV—16: Ահա
սրբնթաց Չուրագետը արյուն է տանում. արյուն է տանում բացատրված է՝
սաստիկ վարարած է: Այսպես նաև բացատրված են՝ արջախնդրուկի անել,
որբ (թռչունի անուն է), մի այլ առիթով՝ «Որբ թռչունը ծոտ կոչված թռչունն է,
որ գիշերները տխուր ձայն է տալիս» I—688, իսան (ցորենի չափ) VI—26,
դալլուղ (փողի քսակ) VI—27, շարան—հուլունքներից և զանազան փայլուն

¹ Օրինակները վերցված են Հ. Թումանյանի երկերի ահագեմիական հրատարակու-
թյունից:

իրերից կազմված, շարած բան է, որ կանայք իբրև դարդ կրում են սլոնի VI—27, հաբամի (ավաղակ, մարդասպան) VI—30, ֆուշուշկ (հարսնական քող, շղարշ) VI—31 և այլն:

Մի շարք բառեր, ժողովրդական դարձվածքներ Թումանյանի գործերում ստացել են ավելի մանրամասն բացատրություն, իհարկե, այդ բխել է աշխատության բովանդակությունից: «Ուտուպիան էն է որ չկա և չի լինելու» VI—231: «Սումխեթը արդեն վրացերեն բառ է և կնշանակի Հայաստան» VI—215: «Հալաստանը... միշտ եղել է այդ բուֆերի վիճակի մեջ» և ապա «Բուֆեր-մեքենայի այն մասն է, որ իր վրա ընդունելով հարվածներ, ամբողջ մեքենան ապահովում է փշանալուց», իսկ աշխատության սեագրությունների մեջ տալիս է էլ ավելին՝ «և ոչնչացնում է նրանց վնասակար ազդեցությունն ամբողջ մեքենայի վրա» VI—320:

Հ. Թումանյանը երբևմն բացատրություններին ղուգակցել է ստուգաբանություններ: «Սամոեդներն իրենց անվանում են խաղ-օվո կամ խաս-օվո, որ կնշանակի միայն ինքը կամ ինքը մենակ: Ռուսները էս բառը թարգմանել են самодин կամ само-един և ժամանակի ընթացքում աղավաղելով շինել են самоед, որ կնշանակի ինքնակեր և տեղիք են տվել էն տարածված սխալ կարծիքին, թե նրանք իրենք իրենց ուտում են կամ իբրև թե մարդակեր են: Ճիշտ էնպես, ինչպես որ չինական սմովար բառը շինել են самовар, մենք էլ թարգմանել ենք ինքնահո» III—125:

«էս ճամփով եթե ավելի հեռու գնանք,— շարունակում է Թումանյանը,— կտեսնենք, որ հայ ժողովուրդը եթե Արաքսի համար ասում է գիժ-Արազ, Արազ բառը թերևս ոչ մի կապ չունի Արաքս բառի հետ: Արազ կնշանակի հենց գիժ, խենթ, խելագար, մի ածական, որ արևելքից եկած թուրք-թաթար-մոնղոլ ցեղերն են տվել Արաքսին, որ մեր ժողովուրդը թարգմանությունը հետը դարերով պահել է իր լեզվի մեջ: էսպես էլ Սիս ու Մասիս ձևը, որ պործ է ածում մեր ժողովուրդը մեծ ու փոքր Մասիսների համար: Մեր հայտնի լեզվագետ պ. Հ. Աճառյանն իր գավառական բառարանի մեջ ասում է Սիսը Լնթադրված է Մասիսից, իբրև թե անիմաստ բառ է. բայց ես էնքան եմ համոզված ժողովրդական լեզվի էս օրենքին, որ համարձակվում եմ կարծել, թե էդպես չպետք է լինի: Հնդկա-ռուսական բառարանում (հեղինակը նկատի ունի Капитан Ягелло-ի «Индустано-русский словарь», СПб, 1902 աշխատությունը—Դ. Դ.) Սիս սանսկրիտերեն կնշանակի սար, գագաթ, բարձրություն: Մի՞թե սրանով չի կարող արդարանալ՝ մեծ ու փոքր Մասիսների համար հայ ժողովրդի բերանում պահված Սիս ու Մասիս ձևը, այսինքն սար և մեծ սար: Սիս-լեռ և էստեղից էլ Սիսական, լեռնաստան, Ղարաբաղի հին անունը: Ինչպես դադն էլ Դաղստան է կամ Կաֆ և Կավկավ կամ Կավկաս: հայտնի է, որ նշանակում են լեռ կամ լեռինք» IV—373—374:

«Դեպք է եղել սրանից մի քանի տարի առաջ,—գրում է Թումանյանը,—ևս էլ իբրև սիրող, խոսել եմ հայկական էպոսի երկու մութ բառերի մասին.— խաչ պատրազին և առյուծաձև Մհեր («Հորիզոն», 1916 թ., № 114): Այժմ էլ նույն ձևով, ուզում եմ խոսել մի քանի նոր վիճելի անունների վրա ու հանձնել իմ դիտողությունները մեր բանասերների ուշադրությանը... Մըսրը կամ Մեսրապիմ կոչվում է հին Եգիպտոսը: Մըսըր կամ Մուսուր է կոչվում և հին Ասորեստանը իր Ասսուր աստծու անունով: Մատ—ասորական լեզվով կնշա-

նակի երկիր, Մատ-աստուր—Աստուրի երկիր: Մատ-աստուրը դարձել է Մուսուր, Մուսուրն էլ Մոսուլ, որ այժմյան Մոսուլն է» VI—357:

Անդրադառնալով Շեքսպիրի ստեղծագործությունների Մասեհյանի թարգմանությունների գնահատմանը, Հովհաննես Թումանյանը գտնում է, որ թարգմանիչը սխալ է հասկացել անգլիական խոր բառը, թարգմանելով՝ խրմբերդ: «Մոր Շեքսպիրի ժամանակները,—գրում է Թումանյանը,—կոչվում էր այն մարդը, այն դերասանը, որ խաղամիջոցներին դուրս էր գալիս պիեսի մութ տեղերը բացատրում, մեկնում և զբաղեցնում հասարակությանը: Մեր թարգմանիչները երևի այս խոր-ը շփոթել են հունական խոր-ի հետ և առաջ է եկել այսպիսի կոպիտ սխալ բացատրողի փոխարեն դուրս է եկել երգիչների խումբ» IV—71—72:

«Поэзия Армении» ժողովածուի կապակցությամբ նա հատկապես կանգ է առնում Սայաթ-Նովայից կատարած թարգմանությունների վրա: «Շամամ բառի բացատրությունն էլ,—գրում է Թումանյանը,—էսպես է ասված, որ շատ գոեհիկ պիտի երևա ուսու ընթերցողին: Ասում է. РОД ДЫНИ. Ճշմարիտ է, բուսաբանորեն էսպես է, շամամը РОД ДЫНИ-է, բայց սա էնպես է ճշմարիտ, ինչպես եթե ասեինք գեղեցկուհի և բացատրեինք РОД БАДЫ. Արևելյան բանաստեղծության մեջ շամամի կորուստը կամ սխալ բացատրությունը շատ ու շատ բան է փչացնում» IV—386:

Հ. Թումանյանը բացատրել-ստուգաբանել է նաև ժողովրդական դարձվածքները:

«Այլուն-փայլուն (կրկ.) փայլուն-փայլփլուն: Առաջինը ենթադրված է փայլուն բառեն, ինչպես Սիս-Մասիս»: Գավառական բառարանից մեջբերում կատարելով, Թումանյանը գրում է. «Ենթադրված ասելով՝ պ. Աճառյանն ուզում է ասել, որ առաջին բառերը—այլուն կամ Սիս ինքնուրույն բառեր չեն և առանձին միտք ու նշանակություն չունեն: Ես կարծում եմ սխալ է: Սրանք զույգ բառեր են իրար կողքի գրած և մեկը լրացնում է մյուսին կամ թարգմանում ու բացատրում: Մի բառը ժողովրդի գիտեցածն է, մյուսը սովորածը, և տնամուտ» IV—404:

Այս ձևով հեղինակը տալիս է ային-օյին, ծիլ-ծիլ ոսկի, չոռ ու ցավ. ցելի ալ կրակ, ունֆ ու բունֆ, ջահել-ջիվան, բոյ ու բուս և ուրիշ հարադիրների և դարձվածքների ստուգաբանումը:

Թումանյանը իրավացի կերպով նշում է, թե «մեր լեզվի ստուգաբանության համար մեծապես շահավետ է լինելու էն ժողովրդների լեզուների ուսումնասիրությունը, որոնք երբեք որեւէ ազդեցություն են ունեցել մեզ վրա: Իմ ձեռքի տակ միայն արևելյան մի քանի բառարաններ կան և ես հմուտ չեմ լեզուներին, դրա համար էլ իմ արածը միայն մի շատ չնչին մասն է և գլխավորապես արևելյան» VI—163—164: Հայտնենք, որ նա իր ձեռքի տակ ունեցել է Բուդադովի, Ռադլովի, Ամատունու, Աճառյանի բառարանները և իր աշածները փաստարկելու համար հաճախակի վկայակոչել:

Հ. Թումանյանը գտնում է, որ որոշ ժամանակի լեզվական պաշարը արտացոլող բառարանը չի կարող բավարարել հետագա ժամանակաշրջանի պահանջները: «Ակադեմիական բառարանը (խոսքը ֆրանսիական մեծ բառարանի մասին է—Գ. Գ.) Ռասինին բավական էր, բայց Մոլիերի և Լաֆոնտենի համար աղքատ էր, որոնց պետք էին պատկերավոր ոճեր ու ավելի բնական լիցաներն արտահայտող լեզու», և հետո՝ «Թեև արդեն Ակադեմիական

բառարանը որոշել է ֆրանսերեն լեզվի սահմանները, բայց Մոլիերն ու Լաֆոնտենը չկարողացան սեղմվել նրա սահմաններում և ժողովրդից առանձնահանի, պատկերավոր, հյուսիզ շատ ոճեր, բառեր ու ձևեր» VI—170:

Հովհաննես Թումանյանի համար, ինչպես դիտեցինք, հայ ժողովրդական բառ ու բանը եղել է հարազատ, նրա համար հարազատ են նաև բոլոր այն օտարաբանությունները, որոնք մեր ժողովուրդը շատ դարեր առաջ ընդունել է. և ձուլել իր լեզվի, իր կենցաղի մեջ, զարձրել իր լեզվի օրդանական մասը: «Աբովյանը կամ Սրվանձտյանը,—գրում է Թումանյանը,— իրենց հետևորդներով լեզվական տեսակետից, իմ երևակայության առջև պատկերանում են ճոխ պարտեզի մեջ, ուր փթթում ու ծաղկում են Հայաստանի կլիմային հատուկ փարթամ ու շքեղ ծաղիկները: Ճշմարիտ է, նրանց մեջ կան նաև դրսից, հեռուներից փոխադրած ու պատվաստված շատ ծաղիկներ, բայց բոլորն էլ կենդանի ծաղիկներ են, վառ ու պայծառ երանգներով, զարմանազան ձևերով ու առանձնահատուկ բուրմունքով: Եվ ահա նրանք, մի Աբովյան կամ մի Սրվանձտյան, էս կենդանի ծաղիկներից են կաղմում իրենց փնջերը, որոնք, ինչպես էլ կապված լինեն, միշտ հոտավետ են ու հրապուրիչ» IV—377—378:

Նոր-Նախիջևանի «Լույս» շաբաթաթերթի հոգևածագիր Ա. Մեղրյանը առաջարկում էր հայերեն լեզվից վտարել թուրք-թաթարական և ընդհանրապես օտար բառերը: Թումանյանը «Վոազ պատասխան պ. Ա. Մեղրյանին» հոգևածում գրում է. «...առաջարկում եք «ջանի» տեղ գործածել «հոգյակ»: Եվ ահա բանը դուստվեց. այսուհետև փոխանակ ախպեր ջան կամ Գրիգոր ջան ասելու, մաքուր հայերենով կասենք հոգյակ եղբայր կամ հոգյակ Գրիգոր, կամ թե չէ քեֆ անելիս, ներողություն, մաքուր հայերենով ասենք, խրախճան անելիս կամ առհասարակ ուրախանալիս, փոխանակ «ջան» բացականչելու, կկանչենք «հոգյակ» IV—142: Մի այլ առիթով նույն Մեղրյանին դիմում է. «Խնդրեմ ասեք. եթե մեր լեզվից հանենք ձեր հայածած «ջանը» որ շինական է, թե մոնղոլական-թաթարական, ինչո՞ւ կփոխարինենք: Մի քիչ մտածեցեք, կտեսնեք մի բառ եք վտարում, որի տեղը համազոր ու համաշունչ մի այլ բառ գնել չեք կարող» IV—120:

Բայց այս «ջանի» համար, այսպես ասած, ջան տալով, Թումանյանն ինքուհա բողոքում է անհարկի փոխառությունների դեմ: Նու քննադատության կրակի տակ է առնում Ե. Լալայանի «Աղգազրական հանդեսի» № 11-ը և բերում մի շարք անուններ, որոնք հանված են սխալներով լի ուսուսկան քարտեզից, ինչպես՝ Փլիֆ գլուխը դարձել է Պլի գլուխ, Հովսեփը՝ Օպրեթ, Ահմեդը՝ Ախմազար, Փոկանը՝ Պոգա, Ղարաֆիլիսան՝ Կարֆիլիս, Քյոփլուն՝ Կերպլի և այլն» IV—251: 1914 թ. նոյեմբերի 25-ին հայ գրողների կովկասյան ընկերության երեկույթում տված զեկուցման մեջ խոսելով լեզվական փոխառությունների մասին, Թումանյանը նշում է, թե օտարն ու հայկականը հանդես են դալիս միասին ու «երբեմն էլ փոխ առած և բնաշխարհիկ բառերը ժողովրդի մեջ մնում են անջատ ու որոշ, ճիշտ էնպես, ինչպես ձեթն ու ջուրը՝ ածած մի բաժակի մեջ: Սրանից էլ առաջանում են էն երկբարբառ բառերը, որոնցից մինը սովորաբար օտար, եկամուտ բառ է, մյուսը նրա թարգմանությունը, ինչպես՝ շենք, շնորհք: էս շենքը ոչ մի կապ չունի սովորական շենքի, շինության հետ: արևելյան լեզուների մեջ, օր. հնդկերեն, սսորերեն կնշանակի՝ սիրուն, գեղեցկատես: Եվ ահա ասում ենք՝ շներով-շնորհքով մարդ է:

Սուրբ ծեֆ, որ սխալ ձև է, ճիշտը ժողովրդականն է՝ սուփ ծեֆ: Ծեֆը հայերեն ցայգն է, արշալույսը: Սուփն էլ դարձյալ արշալույսը, բայց արաբերեն ու հնդկերեն, էդպես էլ բար ու պտուղ, աղի-լեղի և ուրիշ բառեր: Քարտեղի վրա եթե կարդում ենք Озеро Нур гѣл, թարգմանեցեք և դուրս կգա՝ озеро ոուսերեն լիճ: Նոուր կամ նուր—մոնղոլերեն լիճ: Գյոլ—թուրք-թաթարական լեզվով դարձյալ լիճ:

էս կնշանակի մոնղոլն եկել է իր լեզվով լիճ է ասել ու անցել, թուրք ու թաթարն եկել են իրենց լեզվով լիճ են ասել ու անցել, այժմ էլ ոուսն է եկել իր լեզվով լիճ ասել: Եվ էսպես ժողովուրդները գալիս են գնում ու նրանց բարբառները շերտ-շերտ դիզվում են իրար վրա» IV—373:

Թումանյանը գտնում է, որ ամենապարզ ու մաքուր լեզուն ժողովրդական բառ ու բանն է և իր միտքը հաստատելու համար մեջբերում է կատարում Դ. Ն. Օվսյանիկո-Կուլիկովսկու «История русской литературы» աշխատության, թե «Պուշկինը..... ասում է...հասարակ ժողովրդի խոսակցական լեզուն (որ, փառք աստուծո, չի փչացնում իր լեզուն օտար և հատկապես ֆրանսերեն կարդալով) արժանի է խորագույն ուսումնասիրության: Չէ՞ որ Ալֆրեդին իտալական լեզուն ուսումնասիրեց ֆլորենտինական բազարում: Վատ չէր լինիլ, որ մենք էլ մեկ-մեկ ականջ դնենք Մոսկվայի նշխարաթուխների (просвирня), նրանք խոսում են զարմանալի պարզ ու մաքուր լեզվով: Պուշկինը չէր քաշվում ոչ հին ձևերից, ոչ նորախոսություններից և ոչ փոխառություններից» VI—170:

Ժողովրդական լեզուն Թումանյանի համար եղել է բարձր ու ազնվագույն:

«Ասում են գեղեցիկ, ազնիվ լեզու պետք է լինի ինտելիգենցիայի լեզուն. փրականության լեզուն»,—գրում է Թումանյանը:

«Բայց ո՞րն է ազնիվը: Ահա մի հիմնական խնդիր: Դուք կարող եք ազնիվ ու գեղեցիկ անվանել ձեր մեջքի չափազանց բարակությունը և էդ գեղեցկության համար միշտ տառապել ձեր շոր կորսետների մեջ սեղմված, գեղեցիկ ու ազնիվ համարել ձեր բարձր կրունկները ու դողդողալ նրա վրա, գեղեցիկ ու ազնիվ համարել ձեր խեղդուկ ու փակ սալոնները, ձեր դեմքի դալկությունն ու արենպակասությունը, ձեր շինծու լեզուն, որ լեզու է կոչվում միայն էս սլատճառով, որ բառեր ունի իր մեջ, այսինքն ամենաքիչը ինչ որ կարող է ունենալ լեզուն և բառերի մի շարան է, մի տեր ողորմիւս, ու էն էլ հաճախ սուտ ու սխալ բառերի... Ազնիվն ու գեղեցիկը կենդանի ժողովրդի կենդանի լեզուն է, որ հազար ու մի ոճերով ու ձևերով է խոսում, բոլոր հազարավոր տարիների ընթացքում հավաքել է հազարավոր գանձարաններից ու պահել, զարգացրել, ճոխացրել, գեղեցկացրել, որ ամբողջովին հոգի է ու հոգեբանություն, պատկեր ու [տրամադրություն]. շունչ ու զգացմունք» VI—167:

«Ո՛չ. թե՛ ժողովրդական, թե՛ գրական լեզվի մեջ լեզվական փոփոխությունները եղել են միշտ, կլինեն միշտ, և շատ է գեղեցիկ, որ էդպես է. միայն թե պետք է իմանալ շնորհքով, խելացի առնել ու տեղը գործածել, ահա խընդիրը: Իսկ ինչ վերաբերվում է ժողովրդական բարբառներից օգտվելուն, դա ոչ թե դատապարտելի է, այլ հենց դա է բնական ճանապարհը կայտառ ու կենդանի լեզու ստեղծելու: Բավական է. մեր երեխաներն այլևս չպետք է սարսափեն «հա՛» ասելիս, և մայրերն այլևս չպետք է մատներն սպառնալի թափ տան նրանց վրա. «հա՛» ասացի՞ր, ինչպե՞ս կարելի է, ասա՛ «այո՛»: Բավա-

կան է, նդովքը պետք է վեր կենա «հա»-ի վրից, իբրև թե նա գռեհիկ է. դրա մեջ ոչ առողջ միտք կա և ոչ էլ ճաշակ» IV—121:

Հովհաննես Թումանյանին ոչ միայն հետաքրքրել է հայ ժողովրդական լեզուն, այլև նրան մտահոգել է նրա ճիշտ կիրառումը: 1917 թ. Հր. Աճառյանի «Հալերն գավառական բառարանի» մասին Հ. Թումանյանը հրապարակել է քննադատական հոդված (ցավոք, անսովարտ), ուր նշում է, թե պետք է հավաքել բարբառների բառամթերքը, կազմել հայոց կենդանի լեզվի բառարանը, լուրջ բարբառների բառերի ու ոճերի գանձարանը և կանգ է առնում հատկապես բառաբացասական դիտողությունների վրա: Նա գրում է. «Սկսենք Երեւանի բարբառից»:

Աճառ—ծավարի նման բույս մըն է, որմե քաշովի (փիլավ) կպատրաստեն: Զ. տփ. հատիկ,— գրում է Աճառյանը: Թումանյանը նշում է. «Առաջին՝ աճառը ր-ով է, ոչ թե ո-ով: Երկրորդ՝ ծավարը բույս չի, որ աճարն էլ նրա նման բույս չի: Աճարն հաճարն է, որ աղում են կամ ծեծում ու ծավար շինում: Եվ երրորդ՝ Տփիսի աճարին հատիկ չեն առում»: Աճառյանն ընդունեց քննադատությունը և «Արմատական բառարանում» Երևանի բարբառի աճառը գրված է ր-ով և բացատրված հաճար (Արմ. բառ., հատ. 4, էջ 43):

«Ամանել—մեկ ամանե մը ուրիշ ամանի մեջ լցնել: Քաղցուն կարասների մեջ ամանեցինք»:

Մի ամանից մի ուրիշ ամանի մեջ լցնել դեռ չի նշանակի ամանել: Ամանել կնշանակի կամ անաման էր և ամանեցին, ամանի մեջ լցրին, տեղավորեցին. և կամ ժամանակավոր մի ամանի մեջ էր, լցրին էն ամանի մեջ, ուր պիտի լցնեին պահելու համար» IV—403:

«Ջրի պուպուզ—հիմար: Այ քեզ ջրի պուպուզ մարդ: Ջրի պուպուզ ավելի շուտ կնշանակի թեթև, թեթևաոտիկ»:

Վոշնել—թորմել, թարշամել: Վոշնել կնշանակի շիկնել, կտրմրել» IV—409:

«Յոլալի պատառ—լավ դիպված: Ավելի շուտ նշանակում է՝ հարուստ հարսնացու կամ արհասարակ հարուստ բաժին»:

Խորոմել—խոտի խորումներ կազմել, առանց կեմի խուրձ կազմել:

Առանց կեմի խուրձ չի կարելի կազմել,— գրում է Թումանյանը:— Խորոմը բնավ նման չի խրձին: Խորոմել՝ կնշանակի խոտը կամ հաշանը մի դրկաշափ առնել, կրկու կողմից վրա բերել, մնացած երկու ծերն էլ ոլորել ու իրար հաղցնել» IV—407:

«Բնոճակ—բույն, բնավայր: Ջնջելի է և թե թրք. օճաք բառեն է»:

Եթե չեմ սխալվում բնոճակ չի, այլ բնոճակ և ոչ մի կապ չունի օճաքի հետ: Բուն արմատից ճակ նվազական մասնիկից է բաղկացած, ճիշտ էնպես, ինչպես կա թև և թևճակ: Կնշանակի փոքրիկ բույն: Օր. ասում են բողոջի բնունակ, բայց չի կարելի ասել թռչունի բնոճակ կամ աղվեսի և կամ մկան» IV—406:

«Ճլուռ—ուռիի ալնալիսի ճլուռ, որ հարմար կբազա բահի կոթ շինելու: Ընդհակառակը: Ճլուռին ճախնուտներում ու գետափերին բուսնող էն բարակ ուռին է, որ սովորաբար չի հաստանում շատ էլ. карзиночная ива» IV—408:

«Շունը շնից, երկուսն էլ մի տնից—երկուքն ալ գեշ ըլլալով՝ իրարու չեն վնասեր»:

Ո՛չ, կնշանակի երկուսն էլ նույն անսլիտան արարածներն են՝ նրանցից անկախ՝ իրար կվնասեն թե չէ» IV—400:

«Տեսնենք ում մայրը լաց կլինի—բացատրած է՝ կտեսնես՝ հերդ կանիծեմ թե չէ: Մութով պարզվում է մութը, և դրա համար էլ մեռում է մութը,—գրում է Թումանյանը,—և բացատրությունն է սխալ: Տեսնենք ում մերը լաց կլինի դարձվածը կնշանակի՝ տեսնենք ով կհաղթի, ով տանել կտա, ով կտուժի» IV—408:

Թումանյանն այս ոգով քննության է առնում շատ բաներ ու դարձվածքներ: Եւ գտնում է, որ գավառական բառարանում «Բառերն ու ոճերը մեծ մասամբ եթե նշանակված են էս կամ էն գավառի անունով՝ էդ չի նշանակիլ թե միայն էն գավառիկն է, այլ թե էն գավառումն է լսել պարոն Աճառյանը կամ ստացել» VI—163:

Քննադատության հրատարակված մասի մեջ հիմնականում երևանի բարբառին վերաբերող բառահոգվածներն են, մինչդեռ նա նայել է ամբողջ աշխատությունը և բավական շատ դիտողություններ ունի նաև այլ բարբառների վերաբերող բառահոգվածների վերաբերյալ: Հ. Թումանյանի ձեռագրերում պահպանված են շուրջ 150 դիտողություններ. ալսպես՝

«Պախրա Ղզ. Տփիս. այծյամ, կիտար: Թումանյանը գիտում է՝ պախրեն եղջերուն է: Եվ հենց վերևում կա պախրակով—էգ եղջերու:

Կաղաղ Ագլ. Ղրբ. կանաչ կեղևը վրան՝ խակ ընկույզ, որով քաղցրավենիք կպատրաստեն: Թումանյանը գրում է. անհասկանալի բացատրություն, նախ կարծեմ հենց կանաչ կեղևն է կոչվում կաղաղ, երկրորդ ոչ թե որով այլ որից (187 բ.):

Փավրաոֆոսի Տփ. դայլի կատաղի տեսակ մէ. Թումանյանը գրում է մարդադայլ:

Ուելլ՝ անասուններու՝ նախատաքար նաև մարդոց բերանը: Ոչ թե անասունների, այլ հատկապես գազանների, օր. անկարելի է ասել՝ ոչխարի ռեխը:

Հողից հող կորավ Շլ. կրսեն այն մարդուն համար՝ որ դառն չքավորության մեջ է, անտեր, անտիրական կմնա: Սխալ բացատրություն է. հողից հող կորչել կնշանակի երկրից երկիր կորչել, շատ հեռու գնալ, իսկ դառն չքավորության մեջ ընկնելուն ասում են հողից հողի կորչել» (54):

Հովհաննես Թումանյանը, քննադատելով Հր. Աճառյանի «Հայերեն դավառական բառարանը», միաժամանակ գտնում է, որ այդ և նման աշխատանքները լուրջ և կարևոր գործեր են: 1922 թ. անդրադառնալով լեզվի խնդրին, հեղինակը գրում է. «Նոր է հավաքվում ու վերաշինվում ամեն բան: Վերաշինվում է և լեզուն և ահա պ. Աճառյանի հայ գավառական բառարանը առաջին լուրջ գործերից միին է մեր լեզվի ուսումնասիրության, մեր լեզվական գանձերի—բառերի ու ոճերի համբարումի» VI—160:

Հ. Թումանյանն առանձնապես բարձր է գնահատել Ս. Ամատունու աշխատությունը: «Սահակ վ. Ամատունին,—գրում է Թումանյանը,—արդեն տպագրում է իր «Բառ ու բան» խոշոր աշխատությունը, որի մեջ հավաքված են մեր կենդանի բարբառներից ու գրականությունից այն բոլոր ոճերն ու բառերը որ չկան «Հայկազյան բառարանում» VI—193, իսկ աշխատության հրատարակումից հետո, 1913 թ. փետրվարի 10-ին Ս. Ամատունուն հղած նամակում գրում է.

«Սիրելի բարեկամ Սահակ հայր սուրբ».

Ստացել եմ Ձեր «Բառ ու բան» գեղեցիկ աշխատությունը և շնորհակալ եմ որքան իբրև բարեկամ՝ հազար անգամ ավելի իբրև գրական մարդ։ Առանց էդ տեսակ աշխատանքների անկարելի է ստեղծել մեր գրական լեզուն։ Նոր կյանքի ու նոր ազդեցությունների պատճառով շատ արագ կերպով կորչում է էդ ամեն բառ ու բաները, և ով նրանց փրկի կորուստից ու մահից, նրանց հետ միասին կանմահացնի իրեն։

Դուք սրանով անմահացնում եք Ձեզ» V—383:

Մի այլ առիթով նշելով աղգային կենդանի լեզվի կարևորությունը, ավելացնում է, թե մեր լեզվի մեջ առաջին լուրջ փորձերն են Ս. Ամատունու «Բառ ու բանը» և Հ. Աճառյանի «Գավառական բառարանը» VI—168:

Հ. Թումանյանը մտածել է նաև հանրագիտարան ունենալու մասին։ 1914 թ. «Կովկասյան էնցիկլոպեդիան» հոդվածում գրում է, թե մենք մեր երկիրը չենք ճանաչում և առաջարկում է կազմել կովկասյան էնցիկլոպեդիա։

Հովհաննես Թումանյանը խստապահանջ է իր նկատմամբ, եթե որևէ ժամանակ այս կամ այն բառը գործ է ածել ոչ ճիշտ, ասպա հետագայում ուղղում է. «այսպես՝ «Գրական նկատողություններ» հոդվածում գրում է. «Խաբը, որ ես վարդի բողոք էի թարգմանել, միաժամանակ մնում է փուշ, ինչպես թարգմանել է հանդուցյալ Ախվերդյանը»:

1916 թ. փետրվարի 16-ին Կարեն Միքայելյանին գրում է. «Քուչակի և Սայաթ-Նովայի երգերի մասին արած իմ նկատողությունների մեջ մի երկու սխալ եմ արել, էս երկու օրը կուղղեմ։ Շահը պետք է մնա մեծատառ, փարը—վահան, միայն նույն տողի շուղկը ոչ թե ճառագայթ է՝ այլ սավեր, խարն էլ և փուշ է և թերևս բողոք ոչ հաստատ» VI—431:

«Նաղաշ Հովնաթանը և նրա, Քուչակ Նահապետի ու Սայաթ-Նովայի սերը» հոդվածում բավական շատ բառային-բառարանային դիտողություններ է կատարում Թումանյանը, գրելով. «Եվ ինձ թվում է, որ տակավին շատ բառեր ու ձևեր են մնում աղավաղված ու անմեկնելի, և շատ բառեր էլ կան սխալ բացատրված»։ Նա իր կարծիքը հաստատում է օրինակներով. «Առաջին երդը՝ (էջ 38) սիրուհուն դիմելով ասում է. «Հեքիմես զանգատ կանեմ», պետք է լինի «Հեքիմ ես՝ զանգատ կանեմ»:

«Թալանեցեք տոլապ տարեք»։ Պետք է լինի «Թալանեցեք տոլապ, թարեք»։ «Տոլապ թարգմանված է անիվ, նենգ, դարան։ Տոլապ կամ դոլաբ կնշանակի պահարան» IV—189—190:

Նույն էջում. «Մաշի դրեք, ֆանար վառեք»։ Պետք է լինի «Մաշիկ դրեք»։ Ժողովրդական ոճ է, որ կնշանակի՝ ճանապարհ դրեք:

Շիշակ բառը թարգմանած է՝ շիշի խորոված։ Շիշակ կնշանակի ջահել։ Մեր ջանգլուկների մեջ ասում է. «Իմ յարը քանց քեզ շիշակ»։ Բայց շիշակ ավելի շատ գործ է ածվում ոչխարի ու տավարի համար։ Եվ այդ մտքով էլ գործ է ածում Հովնաթանն իր գրքում:

Ասում է. «Ձենեք թաղա գառն ու շիշակ» (էջ 92):

Սուշկուլու թարգմանած է դժվար, դժնդակ։ Բայց կնշանակի և մոլոր, հարբած, էջ 50-ում ասում է՝

«Նրբոր կուտեսնիմ երեսիդ խալըն,

Մուշկուլու փարիշան կըլնի իմ հալըն»:

Հաղթած, մոլորված, ցրված կլինի իմ վիճակը, իմ դրուժյունը,— ավելացրելում է Թումանյանը:

Բաղան (սլաւոն) թւրգմանած է մարմին. մեղանում կոնքի և լանջքի ու թիկունքի (бюст и таз) իմաստն ունի, ավելի շատ бюст-ի: Հենց դրքի մեջ (էջ 106), եթե չեմ սխալվում, միակ տեղը, որ բաղան գործ է ածվում, էն երգի մեջ է, որ գովում է Թիֆլիսի զեղեցկուհիներին: Ասում է.

«Բաղանն լայն, մեջքն բարակ» IV—191:

Կան բռներ, որ հարցականով են բացատրված, օրինակ.

«Ղեղաջ աչքով մտիկ անես,

Ծիծաղելով հոգոց հանես»:

«Ղեղաջ բռնի համար ծանոթության մեջ հարցական է դրած՝ թերևս շեղաշ, շեղահայաց: Ո՛չ, միտքը ճիշտ է դուրս եկել, բայց շեղաշ չի, այլ ղեղաջ և հենց էդ իմաստն էլ ունի՝ շեղահայաց, ինչպես ասում են՝ աչքի պոչով նայելը» IV—191:

«Հարուշակ բռնի բացատրությունը (էջ 92) դրած է հարիսա, դարձյալ հարյականով: Հարուշակ կամ հրուշակ հավան է: Զոկերն էսօր էլ հրուշակ են ասում» IV—191:

«Դասագրքերի բարեփոխության խնդիրը» հոդվածում Թումանյանը դարձյալ խոսում է բռների ազավաղումների մասին. «Ճանճն ինչ է—ճմուռն ինչ լիւի: Պետք է լինի «Ճանճն ինչ է— ճենճն ինչ լինի»:

«Ծառի տերեւը իր տակը կկաթի՝ ծառի պտուղը իր տակը կկաթի» IV—277—278:

Թումանյանը, նման անճշտությունները քննադատելով, միաժամանակ պնդում է, որ ինքն էլ կարող է իրավացի չլինել, նա քննադատում է, բայց «...միշտ էն գիտակցությամբ, որ եթե լեզվի խնդրում Աճառյանը կարող է սխալի մեջ ընկնել, անկարելի բան է, որ ես ազատ լինեմ սխալներից» IV—403:

Մէր խոսքի սկզբում Թումանյանի գործերից փաստեր բերեցինք ցույց տալու համար, որ նա բավական թվով բռներ փակագծված և կամ էջատակին բացատրել է: Դրանից բացի նա բացատրել է մի շարք բռների կոնկրետ առումը և կամ թե կազմել իր այս ու այն բանաստեղծության-գրվածքի բառարանը:

«Կաքավի ողբը» բանաստեղծության մեջ, որը տպագրվել է «Հասկերում» 1910 թ., «Սև կաքավիկ, ո՛ւր պիտի դու նստես հիմա» տողի «սև» բառը ծանոթագրված է՝ դժբախտ, սգավոր I—650:

«Ծաղիկների երգի» մեջ Մեծ գովն ընկավ, ձրնհալն ընկավ նույնպես ծանոթագրված է. «Գու—մեղմ տաքություն: Չմեղման մեջ երկու գու է ընկնում, մինը հունվարին, որ կոչվում է փոքր գու, մյուսը մարտին, որ կոչվում է մեծ գու» I—651:

«Հոգեհան» լեզենդի համար (տպագրվել է «Մուրճ» ամսագրում, 1902, № 12, էջ 35—37) Թումանյանը գրել է հետևյալ բացատրությունը. «Հոգեհանը մի բարձրություն է Ախալցխայի և Ուրավելի մեջտեղը: Վրացիք ասում են «Սուլթմահիա»—հոգին դուրս եկավ. իսկ թուրքերը՝ «օզլան փաթրալան»—տղա ճաքեցնող»:

«Փոցխովի ձոր—Ախալցխայի ձորն է» I—691:

«Փարվանա լիճը գտնվում է Ախալքալաքից 20 վերստ հյուսիս-արևելք: Փարվանա են կոչվում և այն թիթեռնիկները, որ թրթռում են ճրագի շուրջը» I—690:

«Մարո», «Լոռեցի Սարոն», «Անուշ» պոեմները, «Շունն ու կատուն» լեզենդը, «Մոծակն ու մրջյունը» առակը ունեցել են իրենց առանձին բառարանները. այսպես՝ «Մոծակն ու մրջյունը» առակի համար. «Սալարել—խեղճանալ, մոլորվել: Մճրվել—ինքն իր մեջ քաշվել, ամաչել: Շահել—պահել» I—699:

«Մարո» պոեմի բաժնում. «Խոնչա—փայտյա մատուցարան, որով հաց ու կերակուր են տալիս հյուրերին: Հուլ տվե՛ք ձեռ օջախից—փոխաբերական դարձվածք է. կնշանակե՛ ձեր աղջիկն ուզում ենք: Տարան հա՛— գուռնայի մի եղանակ է, որ հնչում են հարսին հորանց տանից ամուսնու տունը տանելիս: Քսեց ցայլի լույլ քազուն—կախարդելու միջոցներից մեկն է» II—359:

«Շունն ու կատուն» լեզենդի համար կազմել է հետևյալ բառարանը. «Ճոն—գլխարկ կարող: Որդիանց որդի—որտեղից որտեղ: Մենձ—մեծ: Մերբ—առաջ, չադ: Կունի—գլուխ: Փափախ—զգալ, գլխարկ: Ցրցամ տալ—սրսկել (չուր սրսկել): Էքենց—այդպես: Պետոր—անառակ: Դիվան քաշի—նախագահ դատավոր: Կտորը րնկավ—սնանկացավ: Մթամ—իբրև» I—679:

Թումանյանը, «Շունն ու կատուն» լեզենդը հետագայում դրական մշակման ենթարկելով, օգտագործել է իր այս բառարանը՝ մենձը փոխարինելով մեծ, ձերքը՝ առաջ (ուստից առաջ բաց-բաց կուճին), պետոր՝ անկարգ, սահաթ հոչի-ն՝ հեշտ բան հոչի, ցրտատար էլարը՝ ցուրտը տարավ, օխնելը՝ օրհնել, ձրմոնամուտը՝ ձմեռնամուտ ձևերով:

«Լոռեցի Սաբոն» պոեմի բառարանը ունի 25 բառահոդված՝ համկալ—գուլթանի կամ սարի ընկեր, մզդուր—հովիվ, խողարած, տավարած, այսպես նաև բացատրված են իգիք, շնու, պկու, բայաքի, վերհատել և այլ բառեր:

«Անուշի» բառարանը պարունակում է 16 բառահոդված՝ խոզապարկուկ, պոունգ, ուջա փաշել և այլն:

Հ. Թումանյանի աշխատությունների մեջ այսօրինակ շատ բացատրություններ կան, ինչպես՝ «Հո՛ւ պո՛ւ պո՛ւ պո՛ւ—ամոթի և վախի բացականչություն» I—686: «Ուտնոձոց—գյուղերում վերմակի սակավության պատճառով ոտնուծոց են անում— մի վերմակի տակ պառկում են այս և հակառակ կողմերից, այնպես, որ մեկի ոտները մյուսի ծոցին են լինում» («Ամառվա գիշերը գյուղում») I—614:

«Մովիան—փայլակ:

Արխաչ—թուրքերեն բառ է—հոտի բացօթյա հանգստի վայրն է:

Թև (Շունը թևից վեր կացավ)— այն որոշյալ տեղն է, որտեղից շունը հսկում է» I—624:

«Սիրիուսը» («Սիրիուսի հրաժեշտը» գրվածքում) մեղանից հեռանում է անդադար օրական 2,625,000 վերստ արագությամբ: Նա ծավալով արևից մեծ է 144 անգամ, ավելի պայծառ՝ 88 անգամ: Էնքան է հեռու մեղանից, որ թնդանոթի ռումբը մի ականթարթում 500 մետր զնալով 5 միլիոն տարում կհասնի նրան»—661:

«Օրորոցագող—հայոց գյուղերում ընդունված է գոյությունը մի չար ոգու, որի պաշտոնն է գիշերը, մեծերի քնած ժամանակ, խեղդել տղա երեխաներին օրորոցում կամ փոխել, տեղը մի դե դնելով: Ջանազան գավառներում այլ և այլ անուններ ունի այս դեր: Լոռի կոչվում է օրորոցագող» I—685:

«Ողա—առանձնասենյակ» I—686:

Բացի այս ու այն աշխատությանը կցած բառացուցակներից և ծանոթագրված բացատրություններից, Թումանյանը փորձ է արել բառարան կազմելու

(Ե. Չարենցի անվան դրականության ու արվեստի թանգարան, Թումանյանի արխիվ, № 187ա): Նա հավաքել է և այբբենական կարգով (միայն առաջին տառի պահպանումով) դասավորել շուրջ 200, գլխավորապես բարբառային, բառեր: Գլխաբառերի մեծ մասը բացատրված է:

Հովհաննես Թումանյանը մասնակցել է «Հայ գրողներ» երկհատորյա դասագրքի բառարանների կազմելուն: Ա հատորի արևելահայ գրողների բառարանը իր աշխատանքն է:

Ստեղծագործելիս թե թարգմանելիս Թումանյանի ուղադրության կենտրոնում է եղել հայոց վիշտն ու հայոց պատմությունը, նրա հայրենասիրությունը նկատվում է անդամ բառարանում: Մերբայան էպոսի առնչությամբ ասում է. «Կոսովի դաշտը սերբիական Ավարայրն է» II—447:

Հ. Թումանյանն ուղադրությամբ կարդացել է «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» ժողովածուի հատորները և հատկապես բառարանները: Թումանյանի ձեռագրերում դիտողություններ կան քրդերին, ասորերեն բառերի մասին և համեմատություններ հայերենի հետ:

Հ. Թումանյանի բացատրած ու ստուգաբանած բառերը հազարի են հասնում, դրանք նյութեր են, բառաբացատրություններ, որոնք ամենահուսալի աղբյուր են հանդիսանում հայ բառարանագրության համար, նյութեր, որոնք լայնորեն պետք է օգտագործվեն հայերենի թե՛ բարբառային, թե՛ գրական և թե՛ հեղինակային բառարաններ կազմելու ժամանակ:

ЛЕКСИКОГРАФИЧЕСКИЕ ЗАМЕТКИ ОВАНЕСА ТУМАНЯНА

Г. К. ГАСПАРЯН

(Резюме)

Ов. Туманян в своих произведениях, иногда в скобках, давал толкования употребляемым им иноязычным и диалектным словам и оборотам. Многие из этих толкований весьма объемисты. Особенно интересовал Ов. Туманяна вопрос диалектного словаря. Он написал ценную рецензию о словаре Р. Ачаряна. В общем он в своих произведениях объясняет около 1000 слов. Наряду с истолкованием слов, Туманян дает также ценные филологические сведения об этих словах.